Դարձյա՞լ դուրս կգան ցույցի

Գիտությունների ազգային ակադեմիայի արհեստակցական կազմակերպությունների միության խորհուրդը պայքարապրվում է ապրիլի 22-ին ակադեմիայի նախագահության շենքի առջեւ կազմակերպել հերթական բողոքի ցույցը, քանի որ արդեն 5 ամիս է՝ համակարգի աշխատողները աշխատավարձ չեն ստացել:

ԼԻԼԻԹ ԳԱԼՍՏՅԱՆ

Ինչպես հայտնի է, այս տարի առաջին անգամ գիտության ֆինանսավորման համար սահմանվել է նոր կարգ, ըստ որի՝ ֆինանսավորումը պետք է իրականացվի ոչ թե ԳԱԱ նախագահության միջոցով, այլ ուղղակիորեն գիտական թեմաների ղեկավարների ու պետության (ի դեմս ԿԳՆ-ի) միջեւ կնքված պայմանագրի համաձայն: Սակայն գիտաշխատողների կարծիքով, կառավարությունն իրականում գումար չունի իրենց տալու եւ նոր կարգ մտցրեց ֆինանսավորման ուշացումը կազմակերպչական խնդիրներով պատճառաբանելու համար: Ֆինանսավորման նոր կարգի անցնելուց զատ, գիտության համակարգի հիմնարկները եւս, ի թիվս կրթության ու մշակույթի ոլորտների մի շարք հիմնարկների, այժմ, պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին օրենքի համաձայն, վերակազմակերպվում են եւ ստանում իրավաբանական նոր կարգավիճակ: Ըստ այդմ, քանի որ հիմնարկները ներկայումս նոր կանոնադրություն հաստատելու, առանձին հաշվեհամարներ բացելու գործընթացում են, նրանց ֆինանսավորումն առժամանակ խոչընդոտվել է: Բայց գիտաշխատողների համար այս պատճառաբանությունները նույնպես անընդունելի են. նրանք մատնանշում են իրավաբանական նոր կարգավիճակի անցման փուլում գտնվող ԳԱԱ նախագահության օրինակը, որն առանց որեւէ խնդրի ժամանակին ֆինանսավորվում է: Բացի այդ, ֆինանսավորման ուշացման հարցը լուծելու նպատակով կառավարությունը նախորդ շաբաթ որոշում է ընդունել, մինչ գիտական հիմնարկների վերակազմակերպման գործընթացի ավարտը, նրանց ֆինանսավորել հին կարգով, սակայն դարձյալ գումար չեն փոխանցում: Ուստի ցույցի պատրաստվող ԳԱԱ աշխատակիցները վստահ են, որ վերստին անուշադրության է մատնվում «շարքային գիտաշխատողը», որն այսօր եկամտի այլ աղբյուր չունի, բացի իր խղճուկ աշխատավարձից:

Ինչեւէ, օրերս կայացած կառավարության նիստում դարձյալ բարձրացվել է ԳԱԱ համակարգի ֆինանսավորման խնդիրը: Որոշվել է առաջիկա երկու օրվա ընթացքում տալ գիտության աշխատողների աշխատավարձի 2 ամսվա պարտքը, իսկ եւս երկու ամսվանը վճարել մինչեւ ապրիլի վերջը:

Սակայն, ինչպես ճշտեցինք, կառավարության հիշյալ որոշումը գիտաշխատողներին առանձնապես չի ոգեւորել, քանի որ դեռ հարց է այն նշված ժամկետներում կկատարվի՞, թե՞ ոչ: Այսպես թե այնպես, նրանք պատրաստվում են դուրս գալ ցույցի, կամ եթե ցույցն արգելվի, ԳԱԱ նիստերի դահլիճում ժողով կգումարվի, որտեղ կքննարկվի գիտության համակարգի աշխատողների սոցիալական պաշտպանվածության վիճակը եւ գիտության ֆինանսավորման քաղաքականության հարցը: